

ԽԱՊԱՐ, ա. հապեր, լուր:

ԽԱՊՈՒԼ (անել), ա. քապուլ. ընդունիլ:

ԽԱՌՂ (ըլլալ), Ա. ք., ա. դարք, ընկղմիլ, շուարած, վարանտ մնալ, յուսահատիլ.  
տես ՂԱՐՂ:

ԽԱՌՂԻԼ, մ. հ., ընկղմիլ, յուսահատիլ:

ԽԱՏ, մ. հ., խատուտիկ, խատ գորտեր:

ԽԱՏԵՅ, տես ԳԱՏԵՅ:

ԽԱՏՈՒՄԱՏ, մ. հ., գոյնզգոյն, խատուտիկ:

ԽԱՐԱՊ, ա. աւերուած, աւրշտկուած, աւերակ. սիրոյ տեր եմ հետ քեզ խարապ,  
քեզի համար կը զգամ սեր մը որ զիս կը քանդէ:

ԽԱՐԻՊ, պ. եւ ա. դարիպ, 1. պանդուխտ, 2. օտար երկիր:

ԽԱՖԱՍ, ԽԱՖԵՍ, մ. հ., Ա. ք., ա. քաֆես, վանդակ:

ԽԱՖԻԼ, ա. դաֆիլ, անակնկալ: Կուգամ քեզի հանց դաֆիլ օր, կուգամ այնպիսի  
անակնկալ օր մը (կամ անակնկալ կերպով մը):

ԽԵԼԱՏ (թափիլ), Ա. ք., խելքը թռցնել:

ԽԵՏԵՅ, տես ԽԱՏԵՅ ԵՎ ԳԱՏԵՅ:

ԽՉՏԵԼ, մ. հ., պատռել:

ԽԵՉԵԼ, Ա. ք., դազալ, մ. հ., պ. 1. դազել, պարսկերէն ոտանաւորի ձեւ մը, 2. աշնան  
չոր տերեւ, 3. տերեւաթափ: Տես ԵՎ ՂԱՉԱԼ:

ԽԵԿ, Ա. ք., խակ, տհաս:

ԽԵՉ, մ. հ., քըջ, ետեւի մասը: Մարդուն ի խէջ մի՛ նստիր, այն մարդուն ետեւը  
(այսինքն՝ բովը) մի՛ նստիր-:

ԽԸՉՄԵԹ, ա. ծառայութիւն:

ԽԸՄԻԾ, Ա. ք., քըյմաք, կտրել, բզքտել. մի՛ աներ խըմիշ, մի՛ բզքտեր, մի՛ մեռցներ,  
խնայէ՛:

ԽԸՍԱՐ, ա. խասար, խաբերութիւն, պ. խասար, սառ, ա. խասարեթ, վնասել, վնաս:

ԽԻԿԱՐ, մ. հ., իմասուն (Ախիկար արեւելցի աւանդավիպական իմաստունին  
անունէն սերած բառ):

ԽԻՊ, ԽԻՓ, ԽՊՆԻԼ, մ. հ., ամօթ, ամչնալ:

ԽՆՃԵՐ, մ. հ., ա. պ., թ. խանջեր, դաշոյն? կամ խունճ, պ. դիւնճ կամ դէնճ բառէն,  
նազ, կեղծուած չկամութիւն:

ԽՈՆՉ, պ. խոնջէ, փոքր սեղան, պ. դունջէ, կոկոն:

ԽՈՌ, մ. հ., պարապ, իմ տեղըս խառ պահեցէք. խոռըն, անվախ, որ իրեն խոռըն  
կանգընի խոռ կենալ, Ա. ք., կես մութի մէջ մնալ. խոռ, Ա. ք., պակաս,  
կրծուած, կրճատուած, կէսն Է խոռ: Ա. ք. խոռ կամ խոր, պակաս, թերի  
(տես Ճանիկեան):